




Փրաֆիկ 3. «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-րին ըստ տարիների տրամադրված սուբսիդիաները

Տվյալ դեպքում սուբսիդիան ջրամատակարար կազմակերպություններին հատկացվում է ինքնարժեքից ցածր սակագնով՝ ծառայությունների մատուցման ծախսերի փոխհատուցման համար: Ինչպես երևում է աղյուսակից, ըստ տարիների ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբսիդիայի չափաքանակներն անկանոն են տեղաբաշխված, որը, մեր կարծիքով, համապատասխան սխալ պլանավորումների արդյունք է եղել: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից ոչ ճիշտ պլանավորման արդյունքում քիչ սուբսիդավորումը համապատասխան կազմակերպությունների մոտ հանգեցրել է կրեդիտորական պարտավորությունների կուտակմանը (որոնք հետագայում դուրս են գրվել կամ վերակառուցվել են):

Եթե մինչև 2003 թվականը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնի հաշվարկի հիմքում դրված չէր ՀՀ պետական բյուջեից հատկացվող սուբսիդիան, ապա 2005 թվականն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության համար սակագնի հաշվարկի հիմքում դրվել է մաս սուբսիդիան՝ 1364.9 մլն.դրամի չափով, որը պակասեցվել է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ հասույթից: Այսինքն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի անհրաժեշտ հասույթը շուրջ 30 %-ով նվազեցվել է: Տվյալ դեպքում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին մատակարարվող ջրամատակարարման և ջրահեռացման սակագինը, որը 140 դրամ է, շուրջ 30 %-ով բարձրանալու միտում ունի: Նույնը «Նոր Ակունք» ՓԲԸ-ի մասով է:

Վերջին տարիներին իրականացված միջոցառումների արդյունքում (այդ թվում ցուցանիշների իրատեսական պլանավորման) ՀՀ պետական բյուջեից հատկացվող սուբսիդիաների չափաքանակներն ըստ կազմակերպությունների, ըստ էության, նվազել են, ընդհուպ, որոշ կազմակերպությունների մոտ՝ իսպառ վերացել: Սահմավորապես, «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ին 2006 թվականի առաջին կիսամյակի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվել և հատկացվել է 252.3 մլն.դրամ սուբսիդիա: Նշված ժամանակահատվածում «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց սակագինը եղել է 125.1 դրամ: 2006 թվականի հունիսի 1-ից «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցում է «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից շահագործվող ջրային համակարգերը մրցույթով վարձակալության վերցրած ֆրանսիական Ջեներալ Դեգո կազմակերպությունը, որը մասնավոր կազմակերպություն է և, որը նշված ծառայությունների մատուցման համար հիմնադրել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ն: «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ծառայությունները մատուցում է 172.8 դրամ սակագնով (որը առաջիկա 10 տարիների ընթացքում նվազեցման միտում ունի՝ ընդհուպ մինչև 90 դրամ 2016 թվականին) և որին արդեն ՀՀ պետական բյուջեով սուբսիդիաներ չեն տրվում: 2007 թվականից սուբսիդիաներ չեն տրվում մաս «Լոռի-ջրմուղ-կոյուղի» և «Շիրակ-ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերություններին:

Ընդհանուր առմամբ կազմակերպությունների ֆինանսական կենսունակության և բնակչության վճարունակության բարձրացմանը զուգընթաց՝ պետությունը պետք է աստիճանաբար իրաժարվի սուբսիդավորման քաղաքականությունից, կամ էլ սուբսիդավորման մեխանիզմներն իրականացնի հասցեականության բարձրացման հաշվին տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով:

ԱՎԵՏԻԷ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նորամուծության և ներդրումային գործընթացների (ՆՆԳ) ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ այդ գործընթացների ծավալը և աճը պայմանավորվում են ներդրումային և նորամուծության ռեսուրսների համալիր օգտագործման պայմաններում, որտեղ զուգորդվում են ՆՆԳ նպատակներն ու խնդիրները: Անկախ նրանից, թե նորամուծության և ներդրումային գործընթացներն ունեն իրենց կազմակերպման, գործունեության և տնտեսական գնահատման մեթոդաբանական հիմքերը, միևնույն է, դրանք գործում են փոխ-

կապակցված, ձևավորվում են միևնույն դաշտում, որտեղ նորամուծության գիտատեխնիկական մակարդակը պահանջում է ներդրումային ռեսուրսների որոշակի ծախսեր և հակառակը, միայն ներդրումային ծախսերով է ստեղծվում նորամուծության գիտատեխնիկական որոշակի մակարդակ: Կրելով տարբեր առանձնահատկություններ և գնահատման առանձին չափանիշներ, միևնույն է, ներդրումային և նորամուծության գործընթացները փոխկապակցվում են, ունեն բնութագրման ընդհանուր չափանիշներ և հանդես են գալիս մեկ միասնությունում: Նորամուծության և ներդրումների միասնությունը (ՆՆՍ) իրենից ներկայացնում է քանակական մեծությունների և որակական հատկանիշների ամբողջություն: Այսպես, գերճշգրիտ թվային կառավարմամբ հաստոցի տեխնիկական պարամետրերի մշակումն իրենից ներկայացնում է գիտատեխնիկական միասնություն, որի գործունեությունը, յուրացումը և պատրաստումը պահանջում է ներդրումային մեծ ծախսեր, ի դեպ, միայն մեծ ծախսերով է արտադրանքը լինում գիտատար և մրցունակ: Այդպիսի արտադրանքի թողարկման համար պետք է իրականացնել ինչպես նորամուծության և ներդրումների առանձին, այնպես էլ դրանց միասնական քաղաքականություն: ՆՆՍ-ն քաղաքականության իրականացումը պահանջում է մշակել ներդրում-նորամուծության միասնական գործունեության գնահատման ինտեգրալ չափանիշներ, որոնք ընդհանրացնում են ներդրում-նորամուծության գործունեության արդյունքների գնահատումը: Այժմ անդրադառնալով նորամուծության և ներդրումային գործընթացների և դրանց միասնական քաղաքականության հիմնահարցերի քննարկմանը:

Նորամուծության քաղաքականության էությունը կայանում է նորարարության, բարենպաստ պայմանների ստեղծման, գիտատեխնիկական խնդիրների և արտադրության միջև փոխադարձ կապերի կազմակերպման մեջ: Նորամուծության գործունեության աջակցման համար պետությանը վերապահվում են հետևյալ ֆունկցիաները.

- աջակցել գիտական նորամուծությունների զարգացմանը և նորամուծության ձեռնարկությունների ստեղծմանը,
- ստեղծել նորամուծության նախագծեր, ձևավորել պետական պատվերներ,
- ապահովել հարկաբյուջետային ակտիվ գործունեություն ներդրում-նորամուծության միասնական համակարգում,
- գործել որպես հիմնական ներդրող, բաշխել ներդրումային միջոցները և համակենտրոնացնել նորամուծության ռեսուրսները,
- ինտեգրել ձեռնարկությունների գիտական և գիտատեխնիկական ներուժը, աջակցել դրանց գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացմանը,
- կազմակերպել նորամուծության ձեռնարկությունների ներգրավումը ինկուբատորներում,
- ինկուբացիոն ծառայությունների ֆինանսավորման խթանումը կազմակերպել բարձր տեխնոլոգիաների ստեղծման նպատակով,
- ինկուբացիոն ծառայությունների ստեղծման համար աջակցել օգտագործելու խոշոր ձեռնարկությունների տեխնիկական ներուժը,
- ինկուբատորների ստեղծման համար ապահովել հարկաբյուջետային ֆինանսավորում:

Այդ ֆունկցիաների օգտագործման տեսանկյունից նորամուծության ձեռնարկությունները պետք է դասակարգել ըստ բազային նորամուծության ստեղծման, նոր արտադրանքի թողարկման, նորամուծության սպառման և նոր սերնդի մեքենաների ստեղծման: Նշենք, որ նորամուծության պետական քաղաքականությունը ձևավորվում է պետական օրգանների ֆունկցիաների հիման վրա: Այդ ֆունկցիաներն են՝

- միջոցների համակենտրոնացումը գիտական հետազոտությունների և նորամուծության վրա, նորամուծության խթանումը և դրա արտադրության ու սպառման փոխհամաձայնեցումը,
- նորամուծության ինֆրակառուցվածքի ձևավորումը,
- նորամուծության գործընթացի ինստիտուցիոնալ ապահովումը,
- նորամուծության սոցիալ-էկոլոգիական ուղղվածության կարգավորումը,
- նորամուծության ճյուղային և տարածաշրջանային կարգավորումը:

Նորամուծության գործընթացների պետական աջակցությունը պետք է որոշակիորեն պայմանավորվի տնտեսական կարգավորման ընդհանուր մեխանիզմով, քանի որ նորամուծության քաղաքականությունը իր հերթին կապված է գիտատեխնիկական քաղաքականության հետ: Մեր կարծիքով նորամուծության քաղաքականության գործունեության սահմանները կարելի է բաժանել ըստ դրա միջավայրի ստեղծման և նորամուծության գործընթացների կարգավորման: ՀՀ նորամուծության քաղաքականության մեխանիզմները գտնվում են վերականգնման փուլերում: Այդ առումով նորամուծության գիտատար գործունեության զարգացումը կապված է թողարկվող արտադրանքի պետական ստանդարտացումից և սերտիֆիկացումից, երկրի գիտատեխնիկական ներուժի պահպանումից ու կարգավորումից, նորամուծության գերակա ուղղությունների և տեսակների մշակման ներուժից:

Նորամուծության գերակայելիության ընտրության համար որպես չափանիշներ համարվում են՝

- նորամուծության ընդհանուր պետական նշանակությունը և դրա նախագծերի արդյունավետությունը,
- նորույթի գիտատեխնիկական մակարդակը, տեխնիկական և տեխնոլոգիական ճյուղային ուղղվածությունը,
- նորամուծության ֆինանսավորման տարբեր աղբյուրների ներառումը,
- պետական գիտատեխնիկական նախագծերի ձևավորումը,
- նորամուծության պետական աջակցության ուղղակի և անուղղակի մեթոդների կիրառումը, որը կապված է նորամուծության մրցունակության և բյուջետային միջոցների օգտագործման հետ,
- նորամուծության գործունեության խթանման հարկային և վարկային արտոնությունները:

Այսպիսով, ՆՆՍ քաղաքականության հիմնադրույթների կայացումը պահանջում է ձևավորել դրա


կարգավորման մոդելը՝ հաշվի առնելով այդ մոդելի ենթակառուցվածքի ձևավորման ընդհանուր տնտեսական, ճյուղային և տարածքային առանձնահատկությունները և նորամուծության զարգացման սահմանափակումները, որոնցից են ներդրումային և նորամուծության ռեսուրսների անբավարարությունը, վարկային բարձր դրույքները, ձեռնարկության անվճարումակայությունը և նորամուծության զարգացման թույլ կողմերը:

Աղյուսակ 1.

Ձեռնարկության նորամուծության կազմակերպման բնութագրիչները

Ձեռնարկության նորամուծության ուժեղ կողմերը		Ձեռնարկության նորամուծության թույլ կողմերը	
1	Նորամուծության ցիկլի կարճ տևողությունը	1	Սենցմենթի ցածր մակարդակը
2	Համագործակցության կապերի պայմանավորվածությունը	2	Արտաքին ներդրումների սահմանափակումը
3	Կառավարման մեթոդների կիրառումը	3	Ձեռնարկության վերակառուցման սահմանափակումը
4	Գիտատեխնիկական մոտիվացիան	4	Ռիսկի բարձր մակարդակը
5	Սպառման ոլորտների առկայությունը	5	Մասնագիտական ցածր աստիճանը
6	Կառավարման ենթակառուցվածքի կազմակերպումը	6	Սպառման ոլորտների հիմնավորումը
7	Ինտեգրման մախաղըրայների առկայություն	7	Ֆինանսավորման անկայունությունը
8	Ռեսուրսների պետական բաշխումը	8	Ռեսուրսների օգտագործման բարձր ռիսկը
9	Պետական ֆինանսավորումը	9	Նորույթին հասնելու բարդությունը

Ձեռնարկության նորամուծության ուժեղ և թույլ կողմերի պայմաններում ձևավորվում է ՆՆՄ-ն քաղաքականությունը, որի իրականացումը կապված է բյուջետային ֆինանսավորման, նորամուծության մախսագների հիմնավորման և կայունության ապահովման ինկուբացիոն կրաստերային և չափագիտական ծառայությունների օգտագործումն հետ: Ձեռնարկության ՆՆՄ քաղաքականության իրականացման համար պետք է ստեղծել դրա գիտատեխնիկական կառուցվածքը:



Գծանկար 1. Նորամուծության գիտատեխնիկական կառուցվածքը

Մխնայից երևում են նորամուծության գերակայելի ուղղությունները, որոնց արդյունավետությունը կախված է նորամուծության արդյունքի և ծախսերի տարբերությունից և դրանց շահութաբերությունից: Այստեղից էլ առաջանում է ներդրումային քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը: ՀՀ-ում այս քաղաքականությունը ենթադրում է արտաքին ներդրումների կարգավորման, ներդրումային ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծման կազմակերպում: ՀՀ-ում ներդրումային քաղաքականության շնորհիվ ձեռք է բերվել կայուն տնտեսական աճ, որը 2001-2005 թվականներին կազմել է 12%՝ ի հաշիվ ՀՆԱ-ի 13.4% աճի (2006թ.): Ներդրումների դերի բարձրացման համար ՀՀ Կառավարությունը պետք է նկատի առնի հետևյալ հայեցակարգային մոտեցումները:

1. Հանրապետության տնտեսության բոլոր ճյուղերի համար ստեղծել ներդրումային բարենպաստ միջավայր, ապահովել ներդրումային կայուն և կամխատեսելի պայմաններ՝ բիզնեսի ներդրումային իրավական պաշտպանման համար,
2. փոքրացնել տեղական և արտաքին ներդրումային ռիսկը, ներդրումային գործընթացներում ներգրավել տրանսակցիոնալ կորպորացիաներ՝ հաշվի առնելով արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացիան,
3. ներկայացնել Հայաստանի ներդրումային գործընթացների կազմակերպման առավելությունները, նորարարության գործունեությունը, մասամբ շահութահարկից ազատվելու արտոնությունները,

կարծիքով ՆՆՄ քաղաքականության կայացումը սահմանափակվում է հետևյալ պատճառներով:

Առաջինը լեռնահանքային արդյունաբերությունում բնական ռեսուրսների մշակման ու վերամշակման գործընթացներից ստացվող նյութերի մեղ անվանացանկն է:

Երկրորդը նորամուծության ձեռնարկությունների գործունեության դադարեցումն ու գործող ձեռնարկությունների ոչ հիմնարար մոդեռնացումն է:

Երրորդը իրական ներդրումների անհավասարակշռված կառուցվածքն է:

Մեր կարծիքով նորամուծության և ներդրումային միասնական քաղաքականության ձևավորման համար անհրաժեշտ է վերակառուցել տեղական բնական ռեսուրսների վերամշակման կառուցվածքը, ուժեղացնել նորամուծության ֆինանսավորման պետական աջակցությունը և կազմակերպել ՆՆՄ ինֆրակառուցվածքը:

Ձեռնարկության նորամուծության և ներդրումային գործընթացները ենթադրում են տեխնիկական և ֆինանսական միասնական գործունեություն, որի կազմակերպումը բարդանում է տարբեր գործոնների մասնակցության և ներգործության հետևանքով: Դրանց են վերաբերում նորամուծության տեսակները, գիտատեխնիկական մակարդակը, ֆինանսավորման աղբյուրները և նորամուծության ռիսկը: ՆՆՄ-ի կազմակերպումը պահանջում է հիմնավորել դրանց ծավալները, փոխկախվածության ձևավորման մեխանիզմները և օպտիմալ հարաբերակցությունը: ՆՆՄ-ի կազմակերպման համար՝ որպես հիմնական սկզբունք, պետք է ընդունել արտադրական կարողությունը և դրա ծավալով պայմանավորել ներդրումները, իսկ կառուցվածքով՝ նորամուծության գիտատեխնիկական մակարդակը: Բոլոր դեպքերում ՆՆՄ պայմաններում ինտեգրվում են դրանց գործունեության ցուցանիշները, իսկ նոր ստացված ինտեգրալ չափանիշը համալիր կարգով է արտացոլում ներդրումների և նորամուծության տնտեսական արդյունավետությունը: Հետևյալ աղյուսակով ներկայացնենք ՆՆՄ ցուցանիշների ինտեգրման մեխանիզմը:

Աղյուսակ 2.

**ՀՀ գիտահետազոտական և գիտատեխնիկական աշխատանքների
գնահատման ցուցանիշները**

միլիոն դրամ

h/h	Ցուցանիշներ:	2000	2001	2002	2003	2004
1	Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը	1904	3291	2441	3894	4045
	որից բյուջետային միջոցների հաշվին	1519	1797	1900	1896	2087
2	Գիտական կազմակերպությունների թիվը	88	91	96	99	93
3	Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը	2649	3077	4254	4968	4918
4	Գիտատեխնիկական աշխատանքների ինքնարժեքը	2460	2037	4083	4953	4833
5	Հետազոտությունները և մշակումները	1756	2938	4067	4467	4520
6	Գիտատեխնիկական ծառայությունները	157	140	187	501	397
7	Գիտատեխնիկական ծառայությունների ինքնարժեքը	134	138	140	481	407
8	Գիտահետազոտական աշխատանքների ծավալը	1653	1621	2938	3420	3472
9	Գիտահետազոտական աշխատանքների ինքնարժեքը	1562	1568	2815	3444	3952
10	Գիտատեխնիկական աշխատանքների շահույթը (3-4)	189	140	171	15	85
11	Գիտատեխնիկական ծառայությունների շահույթը (6-7)	23	2	47	20	-10
12	Գիտահետազոտական աշխատանքների շահույթը (8-9)	101	53	123	-54	20
13	Գիտատեխնիկական աշխատանքների շահութաբերությունը (10:4), %	7.7	6.9	4.2	0.3	1.7
14	Գիտատեխնիկական ծառայությունների շահութաբերությունը (11:7), %	17.2	1.4	33.6	4.2	-2.5
15	Գիտահետազոտական աշխատանքների շահութաբերությունը (12:9), %	6.5	3.4	4.4	-1.6	5.8
16	Հետազոտությունների և մշակումների ծախսերի շահութաբերությունը	16.4	5.9	9.9	-0.05	2.3

Ինչպես տեսնում ենք, նորամուծության ստեղծման համար խիստ անբավարար է գիտատեխնիկական աշխատանքների շահութաբերությունը: Այդ առումով անհրաժեշտ է գնահատել նորամուծության ձևավորման գիտատեխնիկական պայմաններն ու նախադրյալները և բացահայտել նորամուծությունների մշակման գիտատեխնիկական ներուժը: Աղյուսակից երևում է, որ ՀՀ-ում գիտահետազոտական աշխատանքների ծավալը ավելացել է 1.86 անգամ, ինքնարժեքը՝ 1.96 անգամ: Ինքնարժեքի բաժինը 92.9 %-ից բարձրացել է 98.1 % կամ ինքնարժեքը բարձրացել է 5.2%-ով: Արտադրանքի փորձնական օրինակների բաժինը գիտական աշխատանքների ծավալում 4.5%-ից իջել է 3.5%-ի: Գիտահետազոտական և գիտատեխնիկական աշխատանքների ընդհանուր արդյունքում այդ աշխատանքների շահութաբերությունը 16.4-ից իջել է մինչև 2.3%, որը տեղի է ունեցել նոր արտադրանքի նվազագույն ծավալի և գերնորմատիվային ծախսերի հետևանքով:

Գիտահետազոտական և գիտատեխնիկական աշխատանքների գնահատման համար պետք է հաշվի առնել նորամուծության բաժինը վերոհիշյալ աշխատանքներում և նկատի ունենալ նորամուծության գիտատեխնիկական մակարդակը, շուկայավորումը, արդյունք/ծախս և արդյունք/ռիսկ ցուցանիշների դինամիկան և վաճառքի ծավալը: Արդյունաբերական ձեռնարկություններում նորամուծա-ներդրումային միասնական գործընթացի իրականացումն անհնար է առանց գիտատեխնիկական գործընթացների կազմակերպման: Այդ առումով անհրաժեշտ է՝

- մշակել ձեռնարկությունների ՆՆՄ-ի որոշման մեթոդաբանությունը, գնահատել դրա իրականացման նշանակությունը,
- որոշել ՆՆՄ-ի կայացման ծախսերի բաժինը գիտահետազոտական և գիտատեխնիկական ծախսերի ընդհանուր բաժնում,

- հիմնավորել գիտահետազոտական և գիտատեխնիկական ծախսերի շահութաբերությունը.
- որոշել ՆՆՄԳ-ի կազմակերպման գործոնները, ֆինանսավորման աղբյուրները և ընդհանուր շահութաբերությունը, որը պայմանավորվում է նորամուծության իրացման և ներդրումների օգտագործման արդյունավետության մակարդակով:

Ձեռնարկության ՆՆՄԳ-ի գնահատման համար անհրաժեշտ է որոշել նորամուծության արտադրանքի գինը, որը հիմնված է նոր արտադրանքի պարամետրերի գիտատեխնիկական մակարդակների գնահատման վրա: Օրինակ՝ նոր էլեկտրաշարժիչի (50 կվտ) գինը որոշելու համար պետք է ընտրել արտադրանքի հիմնական պարամետրերը, որոշել յուրաքանչյուր պարամետրի բազային արժեքը, որից հետո հաշվարկել նոր արտադրանքի գինը (Նգ) հետևյալ մոդելով.

ն գ

$$\text{Նգ} = \text{Բա} (\sum \text{նար}_i : \sum \text{բար}_i),$$

$$i=1 \quad i=1$$

որտեղ Բա-ն – բազիսային արտադրանքի գինն է դրամով,

նար_i – նոր արտադրանքի i-րդ պարամետրի բազային արժեքն է,

բար_i – բազիսային արտադրանքի i-րդ պարամետրի բազային արժեքն է:

Օրինակ՝ բազային հաստոցի գինը կազմում է 10 հազար դոլար, որի բազային ընդհանուր արժեքը կազմում է 20 բալ, իսկ նոր հաստոցի բալային արժեքը՝ 26 բալ կամ 30% բարձր (26:20), այստեղից նոր հաստոցի գինը կազմում է 13 հազար դոլար (10+30%*10): Ինչպես տեսնում ենք, հաստոցի գնի բարձրացումը կախված է դրա որակի բարձրացումից:

Ձեռնարկության ՆՆՄԳ-ն կազմակերպման և գնահատման համար պետք է որոշել ֆինանսական լծակի ներգործությունը ՆՆՄԳ-ի վրա: Ֆինանսական լծակի ներգործությունը պայմանավորված է դրա արդյունավետության մակարդակով.

$$\text{Ֆա} = (1 - \text{Շն}) \times (\text{Ա}_2 - \text{Տմդ}) \times \text{Փկ} / \text{Սկ}$$

որտեղ Ֆա-ն ֆինանսական լծակի արդյունավետությունն է, %

Շն – շահութահարկի նորման, %

Ա₂ – նորամուծության ակտիվների շահութաբերությունը, %

Տմդ – տոկոսների ընդհանուր գումարի և փոխառու կապիտալի հարաբերությունը, %

Փկ – փոխառու կապիտալը, մլն. դրամ

Սկ – սեփական կապիտալը, մլն. դրամ

Բանաձևը ցույց է տալիս ՆՆՄԳ-ն արդյունավետության կախվածությունը շահութահարկից, ձեռնարկության ակտիվների շահութաբերության աստիճանից, տոկոսների վճարումից և փոխառու կապիտալի ծավալի փոփոխությունից: Եթե Տմդ փոքր է ակտիվների շահութաբերությունից, ապա ձեռնարկության ՆՆՄԳ-ն համար օգտագործվող միջոցների շահութաբերությունը աճում է ֆինանսական լծակի արդյունավետության չափով: Եթե Տմդ մեծ է ակտիվների շահութաբերությունից, ապա ձեռնարկության ՆՆՄԳ-ն միջոցների շահութաբերությունը կլինի ցածր: Օրինակ՝ ձեռնարկության սեփական միջոցները կազմում են 100 մլն. դրամ, փոխառու և սեփական կապիտալի հարաբերակցությունը՝ 1/3, հաշվեկշռային շահույթը՝ 10 մլն. դրամ, շահութահարկի նորման՝ 20 %, միջին տոկոսադրույթը (Տմդ)՝ 18%: Այստեղից որոշենք նորամուծության ակտիվների շահութաբերությունը (Ա₂).

$$\text{Ա}_2 = [100 / (100 + 1/3 \times 100)] \times 100 = 7.5\%,$$

որից հետո որոշենք փոխառու կապիտալի մեծությունը՝ 33.3 մլն. դրամ (1/3×100), ֆինանսական լծակի արդյունավետությունը, որը կազմում է 2.8% = [(1-0.20) × (7.5% - 18%) × 1/3]:

Հաշվարկից հետևում է, որ ձեռնարկության նորամուծության համար օգտագործվում է ավելի քան կապիտալ, որը սեփական կապիտալի շահութաբերությունը կրճատում է 2.8% -ով:

Ձեռնարկության ՆՆՄԳ-ն արդյունավետության վրա ֆինանսական լծակի արդյունավետության ներգործությունը տեղի է ունենում մաս հարկման ենթակա շահույթի և զուտ շահույթի հարաբերակցության փոփոխման ներգործության հետևանքով:

Բերված օրինակի տվյալներով այդ ներգործության մեծությունը կազմում է 2.49 = [(10 մլն. դրամ / 10 մլն. դրամ - 33.3 մլն. դրամ × 0.18) լանգամ: Եթե շահույթը կրճատվում է 10%-ով, ապա զուտ շահույթը պակասում է 0.249 անգամ (2.49×0.1):

Ձեռնարկության ՆՆՄԳ-ն արդյունավետությունը կախված է մաս արտադրական լծակի արդյունավետությունից: Օրինակ՝ նորամուծության հասույթը կազմում է 386 մլն. դրամ, փոփոխում ծախսերը՝ 251.0 մլն. դրամ, տարեկան կայուն ծախսերը՝ 100 մլն. դրամ: Որոշենք, թե հասույթը մեկ տոկոսով ավելացնելու դեպքում որքան է կազմում շահույթը.

$$\text{Շ} = [(386 \times 1.1) - (251 \times 1.1)] - 100 = 48.5 \text{ մլն. դրամ}$$

Երբ համախառն մարժան կազմում է 135 մլն. դրամ (386-251), ապա շահույթը կազմում է 35 (135-100), արտադրական լծակի արդյունքը ավելանում է 3.86 (135:35) անգամ: Եթե իրացման ծավալը ավելանում է 10%-ով, ապա շահույթը աճում է 0.386 անգամ (3.86×10%):

Այսպիսով, ձեռնարկության ՆՆՄԳ-ի վրա ներգործում է մաս արտադրական և ֆինանսական լծակների միասնական գործունեությունը, որի մեծությունը կազմում է 9.61 (2.49×3.86), սա ցույց է տալիս, թե քանի տոկոսով կփոխվի զուտ շահույթը, եթե մեկ տոկոսով փոխվի նոր արդյունքի իրացման ծավալը:

Ձեռնարկության ՆՆՄԳ-ն գնահատումը կապված է մաս նորամուծության կապիտալի գնի որոշման հետ: Կապիտալի գինը իրենից ներկայացնում է որպես նորամուծության համար օգտագործվող կապիտալի տոկոսավճարի գումարի և կապիտալի մեծության հարաբերակցություն՝ արտահայտված տոկոսներով: Կապիտալի

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ձեռնարկության ՆՆՄԳ-ն ընդհանուր բյուջեի անբավարարության հիմնական պատճառը հանդիսանում է նոր արտադրանքի այն կրիտիկական քանակը, որի դեպքում բացառվում է շահույթը (վնասը), և ձեռնարկությունը գտնվում է անվնասության գոտում: Արտադրանքի կրիտիկական քանակը որոշվում է կայուն ծախսերի և մարժայի (շահույթ ու կայուն ծախսեր) հարաբերակցության միջոցով, իսկ կրիտիկական շահութաբերությունը՝ կայուն ծախսեր/ (համախառն մարժա/հասույթ): Օրինակ՝ նոր արտադրանքի հասույթը կազմում է 386 մլն. դրամ, փոփոխում ծախսերը՝ 251 մլն. դրամ, կայուն ծախսերը՝ 100 մլն. դրամ, շահույթը՝ 35 մլն. դրամ, գինը՝ 386 դրամ, իրացման քանակը՝ 1000000 հատ: Այստեղից նոր արտադրանքի իրացման կրիտիկական ծավալը կազմում է $740000 \text{ հատ} = 100 \text{ մլն. դրամ} / (386 - 251)$, արտադրանքի կրիտիկական ծավալը՝ $285700 (740000 \times 386 \text{ դրամ})$, ֆինանսական կայունության պաշարը՝ 100.3 մլն. դրամ $(386 - 285.7)$, անվտանգության մարժան՝ 260000 հատ $(1000000 - 740000)$:

Այսպիսով, որպեսզի ծածկեն նորամուծության բոլոր ծախսերը, պետք է արտադրել 740000 հատ նոր արտադրանք և ստանալ 285.7 մլն. դրամ հասույթ: Նշանակում է նորամուծության բոլոր ծախսերը փոխհատուցվում է հասույթի ծավալով, այն էլ՝ առանց վնասի կամ շահույթի: Ձեռնարկության ՆՆՄԳ-ը գնահատվում է նաև ներդրումների հետզնման ժամկետով: Եթե ձեռնարկությունը գտնվում է անվնասության գոտում, ապա նորամուծության ներդրումների հետզնմումը բացառվում է: Այստեղից հետևում է, որ ՆՆՄԳ-ի գնահատումը պետք է տրվի ինչպես նորամուծության հասույթի օպտիմալ ծավալից ստացվող շահույթի ծավալի, այնպես էլ ներդրումների հետզնման ժամկետի միջոցով: Օրինակ՝ ներդրումները կազմում են 100 մլն. դրամ, հաշվեկշռային շահույթը՝ 77 մլն. դրամ, շահութահարկի նորման՝ 20%, նորամուծության նախագծի յուրացման ժամկետը՝ 0.5 տարի: Ներդրումների հետզնման ժամկետը կազմում է $2.1 ([100/77(1-0.2)] + 0.5)$ տարի: Հետազոտությունների արդյունքում բացահայտվեց, որ ՆՆՄԳ-ն գնահատման համար պետք է որոշել դրա եկամտաբերության ինդեքսը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$E_i = [\sum \frac{Q_i \cdot h_{it}}{(1+i)^t}] / U_i$$

տ=1

Է_i - ներդրումա-նորամուծության գործունեության եկամտաբերության ինդեքսն է,
 Q_i - Հ - նորամուծության իրացման գույք դրամական հոսքերն են տ տարում,
 U_i - միանվագ ներդրումային ծախսերն են նորամուծության իրացման համար,
 h_i - դիսկոնտավորման գործակիցն է,
 t - միջակայքի թիվն է ի ընդհանուր ժամանակում:


Բերված բանաձևը թույլ է տալիս համալիր կերպով գնահատել նորամուծության և ներդրումների արդյունավետության փոփոխությունը, ՆՆՄԳ-ը դիտարկել որպես կառավարման օբյեկտ, որոշել նորամուծության արժեքի և իրական ներդրումների փոխադարձ կապակցության արդյունքը: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ՆՆՄԳ-ն իրականացման համար պետք է հիմնավորել ձեռնարկության ապրանքային արտադրանքի միավորին ընկնող ներդրումների ծավալը, որը պետք է կազմի արտադրանքի արժեքի ոչ ավել, քան 20-25%: Այս ցուցանիշը միջին հաշվով կազմել է 2002թ. 3-4%, 2006թ.՝ 4-5%: Բերված ցուցանիշի աճի համար անհրաժեշտ է՝

- գնահատել արդյունաբերության ճյուղերի ներդրումային առկա ռեսուրսները,
- գնահատել նորամուծության մշակման և յուրացման հնարավորությունները,
- որոշել արդյունաբերության ճյուղերի զարգացման ուղղությունները,
- հիմնավորել ՆՆՄԳ-ն կազմակերպման ֆինանսական աղբյուրները,
- ստեղծել նորամուծության և մյուս ձեռնարկությունների գործարկման համար ինկուբացիոն, կլաստերային և չափագիտական մասնագիտացված ծառայություններ:

Արդյունաբերության ճյուղերի և ձեռնարկությունների ՆՆՄԳ-ն իրականացման համար պահանջվում է գնահատել նորամուծության և ներդրումների տեխնոլոգիական կառուցվածքը:

Մեր հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ ներդրումների ընդհանուր կառուցվածքում արտադրության տեխնիկական վերակառուցման բաժինը կազմում է 9-10%, վերագինումը՝ 40-50%, իսկ ընդլայնումը՝ 30-40%: Տեխնիկական վերակառուցման ներդրումների կազմում նորամուծության ներդրումների տեսակարար կշիռը կազմում է 5-6%: Ինչ վերաբերում է նորամուծության կառուցվածքին, ապա սկզբունքորեն նոր արտադրանքի բաժինը ձեռնարկությունների արտադրանքի կազմում շատ փոքր է (0.5-1.0%), իսկ ձեռնարկությունները դեռևս չեն շահագրգռվում նորամուծությունների կենսագործմամբ, քանի որ գրեթե բացակայում են նորամուծության մշակումներն ու ներդրումային ռեսուրսները: Բացի դրանից, դեռևս չի ձևավորվել նաև ներդրումների և նորամուծության միասնական գործունեության դաշտը, որտեղ ձևավորվում են դրանց իրականացման պայմանները, փոխհամաձայնեցման հայեցակարգերը, գնահատման չափանիշների իմտեզդումը, արդյունավետության գործոնները և, վերջապես, ՆՆՄԳ-ն իրականացման մոդելը: Երկրորդ, չի կազմավորվել ՆՆՄԳ-մ պետական աջակցման մեխանիզմը և հատկապես ՆՆՄԳ-ն կազմակերպման միջավայրը:

Բերված գծագրից դժվար չէ կռահել, որ ՆՆՄԳ-ի իրականացման միջավայրը իրենից ներկայացնում է նորամուծության և ներդրումային գործընթացների իրականացման պայմանների ամբողջություն, որտեղ հանդես են գալիս գործընթացն ու առաքողները, որոնք կարող են վարկավորվել և իրականավորվել պետության կողմից, ընդ որում, ձեռնարկությունների ՆՆՄԳ-ն պահանջում է ապահովել դրա անհրաժեշտ միջավայրերը:



Գծանկար 4. ՆՆՄԳ շրջապատող միջավայրը

ԱՎԵՏԻՔ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Զորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր

ՏԱՐԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ, ՆԱԽԱՐԱՅԱԼՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Տարածաշրջանային միավորումների համակարգում գործում են մարզերը, համայնքները և կազմակերպությունները, որոնց զարգացումը պայմանավորվում է ֆինանսական միջոցների օգտագործմամբ, հաշվի առնելով տարածաշրջանի զարգացման անհավասարաչափության հաղթահարման (ՏԶԱՀ) նախադրյալների ապահովումը, քաղաքական և ֆիսկալ ապակենտրոնացման փոխկապակցությունը, ինչպես նաև այս երկու ուղիների համալիր օգտագործումը, որի բացակայությունը հանգեցնում է միավորների անհավասարաչափ զարգացման: Տարածաշրջանային միավորումների (ՏՄ) հավասարաչափ զարգացումը միայն կախված է սեփական միջոցների ծավալից և բյուջետային ֆինանսավորումից: Այդ առումով քննարկենք սեփական և բյուջետային միջոցների ապահովման պայմաններն ու առանձնահատկությունները: Տարածաշրջանային միավորումների զարգացման ֆինանսավորման մակարդակը որոշվում է դրանց բյուջեի ծավալով և դրա ծախսային մասով, ինչպես նաև ՀՆԱ-ի կազմում իրենց տեսակարար կշռով: Նշենք, որ համայնքների մեծ քանակության պատճառով, դրանց տեսակարար կշիռը այնքան փոքր է, որ դրա հիման վրա հնարավոր չէ որոշել բյուջետային միջոցների ծավալը, հատկացումները և ծախսերի մեծությունը: Այստեղից հետևում է, որ համայնքների խոշորացումը կարևորվում է ինչպես բյուջետային ֆինանսավորման, այնպես էլ սեփական միջոցների ստեղծման նախադրյալների հիմնավորման համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՏՄ-ի հավասարաչափ զարգացումը առաջին հերթին պայմանավորվում է սեփական ֆինանսական միջոցների ծավալով և աճով: Այդ առումով փորձենք ներկայացնել մարզերի, որպես ՏՄ-ն ֆինանսական սեփական միջոցների ստեղծման իրավիճակը, որը ձևավորվում է արդյունաբերական արտադրանքի թողարկման տարբեր պայմաններում:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ 2001-2005թթ. ընթացքում մույն արդյունաբերական արտադրանքը ավելացել է 2,1 անգամ, ընդ որում արտադրանքի աճի բարձր տեմպեր ունեցել են Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերը: Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում Սյունիքի մարզի տեսակարար կշիռը 8,1%-ից հասել է մինչև 18,5%, Արարատի մարզինը՝ 5,1%-ից 7,1%, Գեղարքունիքինը՝ 1,7-ից 2,3% (աղ. 1.1, 1.2):

Միավորումների կամ մարզերի անհավասարաչափ զարգացումը արտահայտվում է նաև մարզերի արդյունաբերական սպառողական ապրանքների արտադրության աճի տեմպերով: Այս ցուցանիշը 2001-2005թթ. ՀՀ-ում կազմել է 166,0%, ընդ որում այս ավելի բարձր մակարդակի է հասել Արարատի մարզում՝ 259,4%, Կոտայքի մարզում՝ 208,9%, Արագածոտնում՝ 187,8% և Գեղարքունիքում՝ 180,3%:

Սպառողական ապրանքների ծավալում ամենաբարձր տեսակարար կշիռ են կազմում Արարատի, Կոտայքի, Լոռու և Արմավիրի մարզերը (աղ. 2):